

ԼԻՈՉԱՆՈՒԹՅԱՆ ՇԱՀ ԱՐԲԱՍԻ ԴԵՍՊՈՒՆ ՎԵՆԵՏԻՆԻ ՄԵԶ*

XV դարու երկրորդ կեսը վճռական ժամանակաշրջան մը կը նշէ վնենտա-պարսկական հարաբերութիւններուն մեջ՝ կարգ մը զուգահէտ դարգացումներու բերմամբ, որոնք խորապէս կադդեն Մերձավոր ու Միջին Արեւելքի քաղաքական իրադրութեան վրա: Կոստանդնուպոլսոյ գրավումով, հետեւեալը և Բյուզանդիոնի վերջնական անհետացումով, տակաւին երիտասարդ օսմանական կայսրութիւնը լրիվ կը մտնէ վերելքի իր զուգադիրին մեջ և կը ծառայուէ զինք ևրպայական մեծ դորութիւն մը ընող աշխարհագրական դիրքը: Գրեթէ միաժամանակ, արևելյան օսմաններուն վրա աչջ կայսրութեան՝ որ արդեն Պելկրատեն և Հունգարիայեն մինչև Եփրատ երկարող հսկա տարածութիւն մը կընդգրկէ, տեղի կունենան խմորումներ՝ որ պիտի առաջնորդեն իրանյան հին փառքերու վերածնունդին: Գլխավոր գեներալտարը այս շարժումին, որոշ հարակարծութեամբ մը, թուրքմենական ծագումով իշխան մըն է՝ Ռույոն Զասարը, որ օսմանյան թուրքերուն անողոքելի ոտնիւր կը դռանայ:

* Ներկա հաղորդումը հայկերենի վերածումն է՝ 1978-ին Վենետիկի պետական համալսարանին կողմի կազմակերպված հոյակապ աշխատանքի միջազգային ժողովին ներկայացված գեկույցի մը, որու խտակերն բնագիրը լույս տեսած է Հռոմ՝ «Orient Moderno», LVIII (1978), p. 357-367:

որուն մեջ պարսիկ ինքնակալը ի միջի ալոց հետևյալը կըսեր. «Ձեր ներկայության կը դրկեմ մեր այս նվիրակը և հավատարիմ ծառան, որ Միրաթ կը կոչվի, ազգով հայ, Լրիվ վստահեցեք այն ամեն բանին՝ որ մեր անունով բերանացիորեն պիտի հաղորդե ձեզի»².

Միշտ վենետու-պարսկական դիվանագիտական առնչություններու ծիրին մեջ, հիշված կը գտնենք ուրիշ հայ մը, 1536—38-ի միջև բանակցություններու այն փափուկ շրջանին, զոր վենետկեցիները Երկու հունի վրա առաջ կը տանեին. մեկ կողմն օսմանցիներուն հետ՝ ի տես հնարավոր ու մասամբ բաղձալի խաղաղության մը, մյուս կողմն Պարսկաստանի Թահմասպ շահին հետ՝ դռները բաց պահելու համար օսմանցիները երկու սուրի միջև խեղդելու հնարավորության մը: Սակայն կիպրացի այդ հայը շուտով կը հրաժարի կամ կը ստիպվի հրաժարի իրեն հանձնված առաքելությունն, որ կը վստահվի վենետու-կիպրացի Սիքայել Մեմբերի. ասիկա թեև առաքելությունը մինչև ծայրը կը հասցնե, բայց չի հաջողիր խափանել անոր ձախողանքը, որ անշուշտ արդյունք էր վենետկյան երկրորդ քաղաքականության խաղին համապատասխան վարպետությամբ մը շղեկավարվելուն: 1504-ի վաղեմագրի մը մեջ ալ կը հանդիպինք հայերու, որոնք ավելի կիսապաշտոն հանգամանք ունեցող վեկույց մը կը ներկայացնեն Արևելքի և Պարսկաստանի կացության մասին:

Հայերու այս բավական հաճախակի երևումը ուրիշ երկիրներու քաղաքական կյանքին մեջ պետք չէ դարձանք պատճառե, Եթե նկատի առնվի հայ գաղութներու ընդարձակածալալ տարածությունը, վաղ միջին դարեն սկսյալ, և անոնց ընկերային, տնտեսական մշակութային դիրքը: Իսկ Ուզուն Հասանի պարագային, որ քրիստոնյա Արևմուտքին հետ բարեկամական հարաբերություններ հաստատելու առաջին փորձերը կը կատարեր, անշուշտ իր ազդեցությունը ունեցած պիտի ըլլա նաև այն մտածումը՝ թե քրիստոնյա միջնորդ մը ավելի դուրավ կրնար թափանցել և ընդունելի ըլլալ այդ միջավայրին մեջ:

Վերադառնալով վերոհիշյալ գաղութներուն, ծանոթ է հայերու զանգվածային ներկայությունը բյուզանդական կայսրության և անոր կենսական կառուցներուն մեջ, իբր ամենեն բազմաթիվ ցեղային միավորը՝ հետ հունյին, այնքան որ հուլակավոր բյուզանդագետ մը կըրցած է մինչև իսկ խոսիլ «հունա-

աշխատասիրության, Վենետիկի հայ գաղութը և հայ-վենետ հարաբերությունները՝ իտալահայ բազմատասնյակ գաղութներուն միջև, ամենեն ավելի ընդարձակորեն ուսումնասիրվածներն են: Ալիշան հավաքած է, սակայն, հսկա ատաղձ մը նաև մյուս գաղութներու մասին՝ որմն լայնորեն օգտվեցանք հայ արվեստի Ա. միջազգային սիմպոզիումի զործերուն մեջ հրատարակված մեր աշխատության համար՝ «Միջին դարու Իտալիո հայ գաղութները և հայ-իտալ հարաբերությունները» (Խոալեռեն). Վենետիկ, 1978, էջ 803—942: Ալիշան Վենետիկի պետական գրիվանին մեջ աշխատած է 1871—72-ին (համտ. II Regio Archivio Generale di Venezia. Parte III. Studio. Persone ammesse alla sala di studio dal 1862 al 1872. Venezia, 1873, p. 389).

² Նամակին պատճենը տե՛ս D. Malipiero. Op. cit., p. 68.

³ Համտ. G. Scarcia. Presentazione all' edizione di Michele Membré. Relazione di Persia (1542), ms. inedito dell' Archivio di Stato di Venezia pubblicato da G. R. Cardona. Napoli, 1969, p. XXXVIII օջ.—Հեղինակին խոսքը կը վերաբերի Կիպրոսի կառավարության կողմն «Տասներու Սուրհուրդի» պետերուն ուղղված 12 մայիս 1538 թվակիր ծածկաղիր նամակին և այս վերջիններու, նույն տարվան 29 օգոստոսին, Կիպրոս ուղղած գրության, երկուքն ալ անտիպ: I de m. Venezia e la Persia tra Uzun Hasan e Tahmasp (1454—1572).—Acta Iranica. 1ère série. Vol. III. Téhéran—Liège, 1974, p. 432.

⁴ Համտ. M. Sanuto. Diarii. T. VI. Pubblicato per cura di G. Berchet, Venezia, 1881, sotto MCCCCIV, agosto, col. 58: Copia de relation habuta da i armeni venuti con l'acqua de le cavalette; G. Berchet. La Repubblica di Venezia e la Persia. Nuovi documenti e registi. Venezia, 1866, 1504-ի հունիսին ներքև, էջ 46:

Հայկական կայսրության մը մասին⁵։ Բագրատունյաց թագավորության անկումը և սելջուկյան ու մոնղոլական հաջորդական արշավները ծայր տվին գաղթային նոր հոսանքներու, որով սկսան կազմվիլ խրիմի, Կալիցիայի, Մոլդավիո, Թրանսիլվանիայի գաղութները, մինչ իտալիա, ուր արդեն վաղ միջին դարեն ի վեր հայկական նշելի ներկայություն մը կար, այս ներկայությունը դեռ ավելի զորացավ և հաստատվեցավ⁶։ Խաչակրությունները նամանավանդ իտալական հասարակապետություններուն, հատկապես ջենովացիներու և վենետիկցիներու առևտրական սերտ հարաբերությունները Կիլիկյան թագավորության հետ՝ հանգած են այն արդյունքին, որ այդ շրջանին (XIII—XIV դդ.) հայերու և իտալիո փոխհարաբերությունները շմնային լուր գաղութներու մակարդակին վրա, այլ բուն իմաստով պետական քաղաքականություն մը դառնային։

Վենետիկի մեջ հայերը իրենց սեպհական հյուրանոցը և մատուցողը ստանան՝ Մարկո Ջիանի դոժին կամ ասոր հոր՝ Սեբաստիանոյի շնորհումով։ XIII դարու կեսին, կամ արդեն իսկ XII-ի վերջերը, հայերը համախմբված էին Կալլե դելլե Լանտեհե կոչված ուղիին շուրջ, որ հետո հայերու անունով Կալլե տևի Ամմենի վերակոչված է և ուր կարելի է տեսնել մինչև այսօր հիշյալ մատուցող⁷։ Ուրեմն հայերը շատ լավ ծանոթ էին Վենետիկի մեջ, և այս կապերը շին տկարանար Կիլիկիո թագավորության անկումով։ Ընդհակառակն, ժամանակին հետ, անոնք ալ ավելի տոկուն կը դառնան։ 1512-ի՝ Վենետիկ հայ տպագրության օրրանը պիտի հանդիսանա։ Ավելի ուշ, XIV—XVIII դարերուն, երբ հին ու նոր Զուղաներու հայ հասարակությունները ակնառու գեր մը պիտի ստանձնեն Արևելքի և Արևմուտքի միջադպրան առևտուրին մեջ, Վենետիկ պիտի մնա տակավին իբրև գլխավոր վերաբերումի կետերեն մեկը հայ վաճառականներուն։ Այս առևտուրին կենսունակության կը վկայեն նույնինքն «Արևելահայերի» բազմաթիվ պաշտոնական վավերագրեր, որոնք առանձնաշնորհյալ վերաբերում մը կը հանձնարարեն հայերու նկատմամբ, զոր կը կոչեն «բազմաթիվ, շատ սիրելի, նախասիրյալ ազգ», որու «առևտուր... կարելի է ըսել թե միակն է քաղաքի ներկա պայմաններուն մեջ»⁸։ Մասնավորապես, սնտեսական այնպիսի իրավիճակի մը մեջ՝ ուր, իբր հետևանք նոր Աշխարհի գյուտին, Եվրոպայի մեջ Վենետիկի տնտեսական գերակայությունը

⁵ Հմմտ. P. Charanis. The Armenians in the Byzantine Empire. Lisboa, 1963, p. 57. Հնդիսակը նույն տեսակետը կը պարզե նաև իր հետադարձախոսության մեջ՝ Armenians and Greeks in the Byzantine Empire, ներկայացված՝ „American Historical Association“ ի 1970-ին Պոսթինի մեջ դոկտորված տարեկան 85-րդ համաժողովին, և հրատարակված The Armenian Review. XXV (1972), № 1 (97), p. 26, վերապրված՝ Social, Economic and Political Life in the Byzantine Empire. London, 1973, VIII.

⁶ Իտալահայ գաղութներու մասին համապատկերի և մասնականացած մատենագիտության մը համար տե՛ս մեր հիշյալ աշխատանքը Ընդհանրապես Արևմուտքի հայ գաղութներու մասին տե՛ս J. Strzykowski. Die Baukunst der Armenier und Europa. Wien, 1918, II, 729—739; Մամուլի տակ է մեր աշխատասիրությունը՝ Les relations des Arméniens avec l'Occident depuis le Haut Moyen Age jusqu'au réveil culturel des XVIIIe—XIXe siècles.—Aufstieg und Niedergang der römischen Welt. Teil III: Հայ գաղթականություն մասին ընդհանուր առմամբ տե՛ս Ա. Ալպոյաճյան. Պատմություն հայ գաղթականության. Կ. Ա.—Գ. Գահրե, 1941, 1955, 1961; Ա. Գ. Աբրահամյան. Համառոտ ուղագիծ հայ գաղթավայրերի պատմության. Կ. Ա.—Բ, Երևան, 1964, 1967:

⁷ Հմմտ. Ալիշահ. Հայ-Վենետ. Բ. եղ., էջ 143—148; L. Zekiyan. Op. cit., p. 886:

⁸ Հմմտ. Ալիշահ. Սիսական. Վենետիկ, 1893, էջ 447 և հտ. նույն. Հայկական աշխարհագրություն, հարաբերությամբ Աշխարհագրական համալգային երրորդ ժողովուն և հանդեսին որ ի Վենետիկ. Վենետիկ, 1881, էջ 5—6; G. Berchet. Venezia e la Persia. Nuovi Dokumenti, 1641, 1648, 1672, 1676 տարիներուն ներքև, էջ 58—60; Zekiyan. Op. cit., p. 911.

հետզհետե կը տկարանար, հայերու նպաստը վենետիկյան տնտեսականության՝ իսկական նեցուկի մը դեր կը կատարեր: Այս գաղափարը կը հեղհեղեն հասարակայնության հինգ իմաստուններուն կողմէ պատրաստված բազմաթիվ զեկուցագիրներ. այսպես՝ «Ներկա ժամանակներու պայմաններուն մեջ, երբ այս քաղաքին առևտուրը շատ ամփոփված է ու մեծ մասամբ այս ազգն է որ դայն կանգուն կը պահէ, քանի որ իր ձեռքին մեջն է մետաքսատուներու և Արևելքի վաճառքը, որով կը նպաստեն մեր հասարակայնության մաքսատուներուն՝ ատոր ելևմուտքով»⁹: Վենետիկ հաստատված այնքան հայ ընտանիքներու կարգին հիշենք, զոր օրինակ, Նոր Զուղայեն գաղթած Շեհրիմանյանները, որոնց առևտրական գործունեությունը, XVII դարուն բովանդակ նվրոպայի մեջ, ամենեն ուշագրավներեն մեկն էր¹⁰:

Ինչ կը վերաբերի Պարսկաստանին, պատմական, Հայաստանի կարևոր մեկ մասը արդեն մաս կը կազմեր Ուզուն Հոսսանի տերության, մինչ հայեր պարսկական հողի վրա փողադրվեր էին դեռ ավելի կանուխ շրջաններում, հատկապես Սելջուկյաններուն կողմե, XI դարու առաջին արշավներու ընթացքին: Այս գաղթականները տեղավորվել էին մասնավորապես Ատրպատականի և Սպահանի գոտիներուն մեջ: Այնքան հոծ թիվ մը կը կազմեին՝ որ, եթե նույնիսկ որոշ վերապահություններ ունենանք ժամանակակից պատմիչներու «հարյուր հազարներու» մասին, կարիք զգացված էր անոնց համար եկեղեցական երկու անջատ թեմ ստեղծելուն. ասիկա կը թելադրե, որ անոնցմե յուրաքանչյուրին հավատացյալներու թիվը հավասար էր քիչ թե շատ՝ բնաշխարհի թեմերուն, այսինքն՝ գավառներուն բնակչության թվին: Մելիք Շահի (1072—1092) և իր վեջի իրեն՝ Նիզամ-ալ-Մյուլքի հանդուրժող և խաղաղասեր քաղաքականությունը սատարած են այդ գաղութներու զարգացման, որոնք ծաղկումի նոր շրջան մը բոլորած նաև՝ ավելի ուշ՝ մոնկոլյան հարստության ներքե, մինչ գաղթականներու նոր տարրեր կը միանային իրենց՝ մայր հայրենիքեն¹¹:

⁹ Վաճառքագրք՝ 13 հուլիսի 1658 թվակիր, մեջբերված Ալիշանե. Սյուսկան, էջ 448. Ալիշան. Աշխարհագրություն, էջ 5—6: XVI դարու վերջերուն և հաջորդի սկիզբները՝ Արևելքի մեջ վենետիկյան առևտուրին վիճակի մասին տե՛ս Relazioni dei Consoli veneti nella Siria, a cura di G. Berchet. Torino, 1866. Մեջբերված տեղեկագրությունները 1574-են մինչև 1628 կը հասնին: Ֆրանչեսկո Սագրեդո հյուպատոսին 4 հուլիս 1611 (էջ 130—137) և 15 մայիս 1612 (էջ 138—156) թվակիր տեղեկագրությունները Խոջա Սաֆարի առաքելության շրջանին կը վերաբերին:

¹⁰ Հմտ. G. Berchet. Del commercio dei Veneti nell' Asia. Venezia, 1864 (estratto dagli «Atti dell' Ateneo Veneto». Serie II, vol. I, 1864). p. 13: Շեհրիմանյան գերդաստանի մասին տե՛ս D. Maxwell White. Zaccaria Seriman. The Viaggi di Enrico Wanton. A Contribution to the Study of the Enlightenment in Italy. Manchester University Press, 1961, p. 15 ss.; Ch. Dedeyan. Les Dédéyan. San Lazzaro—Venezia, 1972, p. 57—61. Վաճառականներու այս ընտանիքն կը սերեր Զաքարիա Շեհրիման, հեղինակ՝ երգիծական, երգաթատերական և իմաստասիրական գործերու: Մաքսվել Հուայտի հիշյալ հիմնական ուսումնասիրություններն զատ, տե՛ս նաև՝ L. Zekryan. Op. cit., p. 925 et sq. Շ. Նազարյան. Վենետիկյան և զրոգ Զաքարիա Շեհրիմանյանի մասին (ակնարկ). — «Բաղմավես», 134 (1976), էջ 108—120: Նույն. Բանաստեղծն ու փիլիսոփան (հայազգի իտալացի զրոգ Զաքարիա Շեհրիմանյան). — «Գրական թերթ», 1978, 22 սեպտեմբեր: Բավական երկար մոռացությունն մը ետք վերջերս նոր հրատարակություն մը ունեցավ Զաքարիա Շեհրիմանի զլխավոր գործը՝ I Viaggi di Enrico Wanton. Ed. Marzorati, 1978, ինչ որ նշան է վերադարձնող հետաքրքրության մը հեղինակին հանդեպ՝ որ ունի իր անժխտելի կարևորությունը վենետիկյան խումբորապաշտական շարժումին մեջ և Միսքունել Հուայտի համաձայն, վերաթերափոխելի գրական դեմք մըն է՝ նաև զուտ գեղագիտական տեսանկյունից:

¹¹ Հմտ. Աբրահամյան. նշվ աշխ., Ա., էջ 234—248: Հ. Առաքելյան. Պարսկաստանի հայերը. նրանց անցյալը, ներկան ու ապագան. մասն Ա, Ազգային մատենադարան ԿԳ. Վիեննա, 1911, էջ 9—19:

Եթե 1500-ի ընթացքին օսմանյաններու հառաջխաղացումը ի վնաս պարսիկներու՝ դարուն վերջերը հասած էր ներփակելու պատմական Հայաստանի մեծ մասը, մինչև Կովկասի ստորոտը, հայ-պարսիկ փոխհարաբերությունն մեջ շատ կարևոր պատմական նոր երևույթ մը կու գար հավասարակշռելու, մանավանդ թե ևս ավելի շեշտելու Պարսկաստանի մեջ հայկական ներկայությունը։ Այս երևույթը՝ որ ոչ միայն պարսկահայերուն, այլ գրեթե բոլոր հայ զաղութներուն համար զգալի անդրադարձներ պիտի ունենար, Շահ Աբրահիմ կողմէ հղացված՝ հայերու գաղթի ծրագիրն էր։ Սկզբնաբար թեև բռնի ու կսկծարեր, այս գաղթը շուտով կը հանգի՝ սակայն՝ գրական արդյունքներու, որով նոր Զուղան կը դառնա ոչ միայն միջազգային առևտուրի ուղիներուն վրա բացառիկ կարևորություն կեդրոն մը, այլ նաև մշակութապես բերրի հող մը՝ ուր պիտի ընձյուղին XVI դարու հոգեկան-մտավորական զարթոնքի այն հասկանալի և անհամարժեք երևույթներն ումանք, որոնք կաւետեն ու կը պատրաստեն հաջորդ դարուն հայկական վերածնունդը՝ որու վճռական մղումը ճիշտ վենետիկէն պիտի դա¹²։

Շահ Աբրահիմ, տպավորված հայերու ձիրքերէն, դանոնք կենսական տարրերին մէկը պիտի ուզէ ընել ոչ միայն իր երկրին տնտեսականության, այլ նաև իր արքունիքին և պետական ղիվանագիտության։ Նշանակալից են այս տեսակետէ հոռմալեցի ուղեգիր Պիետրո դելլա Վալլեի հետեւյալ խոսքերը. հայերը «լերարդանց վարկ մը կը վայելեն Պարսկաստանի թագավորին մոտ, այնպէս ինչպէս ջինովաղիները՝ Սպանիոյ թագավորին մոտ. ոչ անոնք կրնան առանց լիազօրութիւն ապրիլ, ոչ ալ թագավորը՝ առանց իրենց»¹³։ Այս խոսքերը

¹² Շահ Աբրահիմ պարտադրած գաղթին և Պարսկաստանի մեջ հայերու ներկայության մասին զաղթէն առաջ և վերջ տե՛ս Պատմութիւն Առաքելի վարդապետի Դարիժեցոյ, սակայն զիսկ ձածող Հայաստանեայց եւ գաւառին Արարատայ եւ մասին Գողթան գաւառի, սկսեալ ի ՌԿԱ. Թուականին Հայոց մինչև ի ՌՅԱ. Թ., Դ. տպ., Վաղարշապատ, 1896: Զարարիայ սարկաւագի Պատմագրութիւն. Վաղարշապատ, 1870, հտկպ. Գիրք Ա, գլ. ԺԲ, էջ 18—20: Մ. Զամչեան. Պատմութիւն Հայոց. հ. Գ, Վենետիկ, 1786, էջ 525 և հտ. Գ. Ալիշան. Սխական, էջ 409—428, 442—448, 465 և հտ. Գ. Զամչեան. Հայ-Վենետ, հտկպ. էջ 368—380: Լեոն. Հայոց պատմութիւն. հ. Գ, Երևան, 1946, էջ 228 և հտ. Գ. Հայ ժողովրդի պատմութիւն. հ. Գ, Երևան, 1972, էջ 324—327: Ա. Ալիշան. Նշվ. աշխ., հ. Գ, էջ 125—281: Ա. Աբրահիմ. Նշվ. աշխ., հ. Բ, էջ 216—242: Գ. Շիրմադյան. Նիւթեր ազգային պատմութեան: Երևանի հայկադոնք ի Պարսկաստան. Ռոստով, 1890: Հ. Առաքելյան. Նշվ. աշխ., էջ 20 և հտ.։ F. Tournebize. Shah Abbas et l'émigration forcée des Arméniens de l'Ararat. Vienne, 1911; M. Artignan. Le commerce des Arméniens au XVIIe siècle, extr. de la „Revue de Géographie de l'Est“. 4^e trimestre, 1900; E. A. Байбуртян. Армянская колония Новой Джульфы в XVII веке. (Роль Новой Джульфы в ирано-европейских политических и экономических связях). Ереван, 1969; R. Ferrer. The Agreement of the East India Company with the Armenian Nation, 22nd June 1688.—Revue des études Arméniennes. N. S. VII (1970), p. 427—443; Idem. The Armenians and the East India Company in Persia in the Seventeenth and Early Eighteenth Centuries.—Economic History Review. 2nd S. 26 (1973), p. 38—62; J. Carswell. New Julfa: The Armenian and Other Buildings. Oxford, 1968, p. 3—15; K. Karapetian. Isfahan, New Julfa: Le case degli Armeni—The Houses of the Armenians. Roma, 1974. Notizie storiche, p. 5—26, Historical Notices, p. 29—50; V. Gregorian. Minorities of Isfahan: The Armenian Community of Isfahan, 1587—1722.—Iranian Studies. Journal of the Society for Iranian Studies. VII (1974), № 3—4: Studies on Isfahan, part II, p. 652—680; H. De Mauroy. Chrétiens en Iran. Ve partie: L'Eglise Arménienne.—Proche Orient Chrétien. XXVII (1977), fasc. 1—2, p. 79—94.

¹³ Viaggi di Pietro Della Valle Il Pellegrino, descritti da lui medesimo in Lettere familiari all'erudito suo Amico Mario Schipano. La Persia, parte II/vol. II. Roma, 1658, Lettera 14 da Sphahan de' 24 di Settembre 1621, par. VIII, p. 244.

կը հաստատվին պատմական արարքներն: Այսպես է որ 1603-ի փառահեղ պատվիրակության մեջ, զոր կը գլխավորեր Ֆեթհի Բեյ՝ «բարձրաստիճան անձնավորություն և թագավորին մասնավոր գործադատար»¹⁴, կան երեք հայեր՝ ուրիշ վեց պարսիկներու և թարգմանի կողքին¹⁵: 1607-ին, երբ օսմանյան պարսկական պատերազմին պատճառով, չէին կրնար տեղի ունենալ պաշտական պաշտոնական զեսպանագնացություններ, հայ վաճառական մըն է, խոջա Շիրոշը՝ որ կը նտրվի շահեն իբրև մասնավոր պատգամաբեր վենետիկի հասարակապետության մոտ: Իր ընծայականին մեջ՝ թագավորը Հռոմ խոսքերով կը ներկայացներ խոջա Շիրոշը. «Զրկված ըլլալով ձեր կողմերը զրկելու պատեհություններն մեր արքունիքին հատուկ մարդիկը, քանի որ անցքը խափանված և արգիլված է, որոշեցինք հիմա այդ կողմերը զրկել իր հավասարներուն և նմաններուն միջև պատվական խոջա Շիրոշը, որ ջուղայեցի քրիստոնյա վաճառական մըն է»¹⁶: Զուղայեցի ուրիշ հայ մը, Մարտիրոսի որդի Հովհաննես, 1608-ին Պոլիս կը զրկվի շահին կողմէ՝ վաճառականական առաքելությամբ մը¹⁷: Ասոնց ժամանակակից կը հիշվի՝ Ալիշանն՝ հուլիսի 1-ին վարդապետ մը, Հակոբ Ամգեցի Մարգարյան, որ 1593—1606-ի միջև եվրոպա կը գտնվի մասնավոր առաքելություններով՝ զոր հանձնած են իրեն ոչ միայն հայ ավագանիներու կաթողիկոսը, այլ նաև վրացական արքունիքը և նույնինքն Շահ Աբբաս: Հակոբ Ամգեցիի առաքելությունը տեղի կունենա Վենետիկ, Հռոմ, Գերմանիա և գուցե այլուր: Դժբախտաբար կը պակսին ճշգրիտ տեղեկություններ այս առաքելության բնույթին և վախճաններու մասին¹⁸: Թերևս Հակոբ հիշյալ հեղինակություններուն, Արևմուտքի մեջ, տեսակ մը մնայուն ներկայացուցիչն ըլլար և կամ, գուցե ավելի հավանորեն, կատարեր փորձեր օսմանյաններու դեմ խոշոր զինակցություն մը կազմելու:

Միջադեպին մակարդակի վրա Պարսկաստանի քաղաքական կյանքին հայերու այս գործոն մասնակցության պատմական շրջաժիրին մեջ կը գետնադրվի՝ 1610-ին մերս խոջա Սաֆարին հանձնված պատգամավորությունը:

Այս խոջա Սաֆարը, անկասկած, հայ պատմագրության ամենեն մոռցված դեմքերեն մեկն է, թերևս իր նույնանունության պատճառով իրմե շուրջ տասնեակհինգ տարի մը երեց մյուս խոջա Սաֆարին հետ (1563—1618), որ Պարսկական թագավորության ենթակա բոլոր հայերուն իբրև գլուխ և ներկայացուցիչ ճանչցված էր¹⁹: Մերս խոջա Սաֆարը, որդի Եստիկարի կամ Եստիկարի, որ Շահ Աբբասի կողմէ Արևմուտք կուղարկվի իբրև դեսպան, չէ հիշված ոչ XVII դարու պատմագիրներ՝ Առաքել Դավրիժեցիի կամ Զաքարիա Սարկավազի, ոչ ժամանակակից մանր ժամանակագրություններ կամ հիշատակարաններ, ոչ ալ Զամչյանի, Օրմանյանի կամ Լեոյի նման հեղինակներ²⁰: ՀՍՍՀ գիտություններու ակադեմիային խնամքով հրատարակված բազմահատոր Հայ ժողովրդի պատմությունն ալ նույնպես լուծված կանցնի իր մասին: Մեզի ծանոթ միակ պատմագիրը, որ զայն հիշած ըլլա, Ալիշանն է: Սիսականի մեջ երկու անգամ կը խոսի իր մասին²¹ և անշուշտ շատ ավելի ընդարձակորեն պիտի խոսեր, եթե հասներ շարադրելու Հայ-Վենետիկ ժողովրդած Գ. Եղանակը²²:

¹⁴ Berchet. Op. cit. 1865, p. 44.

¹⁵ Անդ:

¹⁶ Անդ, Doc. XXXVI, p. 200 et sq.

¹⁷ Հմմտ. Ալիշան. Սիսական, էջ 419:

¹⁸ Հմմտ. Ալիշան. Հայ-Վենետիկ, էջ 350—367:

¹⁹ Տե՛ս Հ. Քյուրտյան. Զուղայեցի խոջա Սաֆար ու խոջա Նազար. — «Բազմավեպ», 133 (1975), էջ 379—396, 134 (1976), էջ 375—395, շարունակելի:

²⁰ Հմմտ. Վ. Հակոբյան. Մանր ժամանակագրություններ. հ. Ա—Բ, Երևան, 1951, 1956: Ժողովրդի ձեռագրերի հիշատակարաններ. հ. Ա—Բ (1601—1640), Երևան, 1974, 1978:

²¹ Սիսական, էջ 419, 443:

²² Տե՛ս Հայ-Վենետիկ, էջ 507:

Այս կացության մեջ, ներկա ուսումնասիրության նպատակը պիտի ըլլա քիչ մը լույս սփռել սեֆյան արքունիքի այս որոշ կարևորությամբ դեմքին վրա, գոնե այն չափով՝ որով կը շահագրգռե հայերու մասնակցությունը երկ- լին թաղաքական կյանքին, մեկտեղելով և համադրելով այն ծանոթություն- ները՝ զոր կրնանք ունենալ իր մասին: Բնականաբար, պատմական այս դիմա- դիծի վերակառուցումին առաջին մեկ փորձն է ասիկա, որ կը հիմնվի ցարդ հրատարակված աղբյուրներու վրա և որ կրնա մեկնակետ մը հանդիսանալ անդրագույն խորացումներու համար, հատկապես դիվանային անտիպ վավե- լաթուղթերու պրպտումով, որոնք կրնան գտնվիլ Զենոփայի, Հոռմի կամ այլ թաղաքներու դիվաններուն մեջ, նկատի առած որ հայերու առնչությամբ ցարդ ամենեն ավելի մաղված դիվանները վենետիկյանները եղած են, շնորհիվ Ալի- շանի հարատև հետախույզումներուն:

Խոջա Սաֆարի մասին տպված գլխավոր աղբյուրներն են՝ դիվանագիտա- կան վավերագրերը ու վերոհիշյալ ուղեգիր Պիետրո դելլա Վալլե: Վենետիկի մեջ իր ունեցած դիվանագիտական գործունեության վերաբերյալ վավերաթուղ- թերը հրատարակված են Բերշեյն և կը կրեն XXXVII—XLI թվարկումը²³:

Խոջա Սաֆար ինքզինքը «Ետիկարի որդյակ» կը կոչե Հինգ իմաստուն- ներու խորհուրդին տված իր ստացագրին մեջ՝ փոխան հասարակապետության կողմէ իրեն հանձնված ապրանքներուն²⁴: Ետիկարո անունը հայերու միջև չի լիկի ունեղած ըլլալ համեմատաբար լայն ծավալում մը, ինչպես օրինակի համար՝ այդ շրջաններուն մուտք գործած ուրիշ պարսկական անուններ՝ Սա- ֆար, Նազար, Կուլիստան ևն.: Կարելի չեղաւ գտնել Խոջա Սաֆարի հոր կամ քնտանիքի մասին որեւէ հիշատակություն: Շատ հավանաբար վաճառականնե- րու սերունդ մըն էր, առանց ազնվապետական կապակցություններու, որ հաս- կարճ պակերու բերումով ինքզինքը կայսերական դիվանագիտության մեջը կը գտնե, ինչպես եղած էր ավելի առաջ Խոջա Շիրազի պարագային ալ: Անդարև, Ֆեթհի Բեյի վերոհիշյալ պատգամավորությունը, վերադարձի ճամբուն վրա, բռնկած կը տեսնե օսմանյան-պարսկական պատերազմը: Սուրիա կը հասնի՝ օսմանցիներ ճամբանին կը կտրեն ու կը գրավեն Վենետիկի մեջ նվեր ստաց- ված ու գնված իրեղենները: Ասոնցմե մաս մը, հաջորդաբար կրկին ձեռք անց- ված, պահեստի կը դրվեր Վենետիկի հյուպատոսին մոտ, մինչ ուրիշ մեկ մասը ետ Վենետիկ կը դրվեր: Մինչ ալ շահը, մտահոգված պատգամավորության վիճակով, Խոջա Շիրազը կուղարկեր լուր բերելու համար. սակայն Սուրիո կող- մերև հասած լուրերը զինք կը մղեն նոր առաքելությամբ մը Խոջա Սաֆարը պեղի Վենետիկ ուղարկելու: Հալեպի մեջ Վենետիկի հյուպատոս՝ Զովաննի Ֆրանչեսկո Սագրեդոյի կողմէ Խոջա Սաֆարի համար գրի առնված և Վենե- տիկի իշխանություններուն ուղղված ընծայականն կը սեղեկանանք՝ որ Սա- ֆարի հայրը Ետիկար հյուպատոսարանի միջնորդն էր պարսիկ արքունիքի մոտ²⁵: Միևնույն ընծայականն կիմանանք նաև, որ Ետիկար մեծապես մը- տահոգ էր իր զավակին հանձնված պատասխանատվությամբ, ինչ որ ղյուրալ կը հասկցվի՝ Լթև նկատի առնենք որ Սաֆար հազիվ երեսուներկու տարեկան է այդ պահուն և շատ հավանորեն ղուրկ՝ դիվանագիտական փորձառութենե²⁶: Սանափանդ թև, Սագրեդոյի ինչ ինչ արտահայտություններ այն տպավորու- թյունը կը թողուն՝ որ և ոչ իսկ նման առաքելության մը համապատասխան պարգացում ունենալու: Արդարև, հյուպատոսը սա Լուլթր կունենա իր գրու- թյան մեջ. «Ո՛չ թև անոր համար որ կը կարծեմ թև մեծամեծ պատիվներու

²³ Berchet. Venezia e la Persia, 1865, p. 201—209.

²⁴ Անդ, Doc. XL, 17 փետր. 1610, էջ 208:

²⁵ Անդ, Doc. XXXVII, Հալեպի տրված՝ 2 սեպտ. 1609-ին, էջ 202:

²⁶ Անդ, Doc. XXXVIII, 30 հունվար 1610, էջ 203:

արժանի ըլլա այս հոգա Սաֆարը (որ և ոչ իսկ ինչ ինչ եզրերու նշանակությունը գիտե զանազանել), այլ միայն անոր համար որ, եթե իր գործերուն նրկատմամբ շատ գուրգուրանք և սեր ցույց տաք, ինքն ալ իր կարգին Նորին Վեհափառ Տերության կը վկայեն՝ թե ձեր կողմն շատ ակնառու շնորհամներ և բարյացակամություն վայելած է»²⁷։ Որովհետև, ինչպես քանի մը տող առաջ ըսած էր, թագավորը «այնքան կը սիրէ Վենետիկի անունը, որ մերիներեն իր արքունիքը գացող որևէ մարդու հետ, նույնիսկ եթե ամենեն նվաստ աստիճանին պատկանի, մեծ մտերմությամբ կը վարվի և այնքան դյուրություններ ու բարյացակամություն կընձեռնէ՝ որ ավելին կարելի չէ երևակայել»²⁸։ Ասոր համապատասխան ձևով վարված էր արդեն նույնինքն հյուպատոսը որ Սաֆարին երկու հարյուրն ավելի դահեկան փոխ տված էր առանց տոկոսի, հակառակ Սաֆարի պնդումին նույնիսկ առավելագույն սակով տոկոսը վճարելու և միևնույն ատեն հրահանգած էր՝ որ շուտով Աղեքսանդրեկեն բերվին և Սաֆարի հոր հանձնվերին շահին սահմանված կարգ մը ապակեղեններ՝ արքունիք փոխանցվելու համար։ Այս բոլոր մեծապես հաճելի անցած էր Սաֆարին և իր հոր, որոնք ընդարձակ տեղեկություն մը ղրկած էին թագավորին՝ Վենետիկի հյուպատոսին կողմն իրենց վայելած հոգատարության մասին²⁹։

Սաֆար դոժին կը ներկայացվի «ամենահավատարիմ» թարգմտն Ջակոմո Նորեսի կողմն, 22 հունվար 1610-ի ուրբաթ օրվան առավոտյան։ Իրեն կը հետևեն՝ պարսկական տարազներով շորս ծառաներ։ Զինք կը բազմեցնեն, նախապես կատարված կարգադրության համաձայն, «ցամաքի գերամեծար իմաստուն տերերեն վեր»³⁰։

Հակառակ Սադրեդոյի հանձնարարական նամակին մեջ արտահայտված վերապահություններու, պաշտոնական ունկնդրության պատրաստական զբույսի ընթացքին Սաֆարի մասին Նորեսի ստացած տպավորությունը բոլորովին դրական եղած է։ Արդարև, ունկնդրութենեն առաջ կողմնորոշված իր տեղեկատվության մեջ՝ Նորես կը գրե Սաֆարի մասին. «Լավ կը խոսի և իր պատճառաբանություններուն մեջ շատ ողջամիտ և շրջահայաց կը հայտնվի»³¹։ Միշտ միևնույն տեղեկատվության եզրերուն համաձայն, Սաֆար արդեն տասը ամիսն ի վեր կը բացակայեր Պարսկաստանեն։ Սուրիո վրայով Միջերկրական հասած՝ ֆրանսական նավ մը առած էր, որ զինք Մարսիլիա տարած էր. անկից՝ Ջենովայի ճամբով, Լիվոռնոյի և Ֆիրենցեի վրայեն, Վենետիկ ժամանած էր³²։

Ճամփորդությունը հանդարտ չէր անցած, մանավանդ Մարսիլիայեն վերջ։ Սաֆարի միտքն էր Սուրիայեն ուղղակի Վենետիկ անցնիլ։ Բայց ուղղակի Վենետիկ գացող նավ մը չգտնելով կը նախընտրե դեպի Մարսիլիա ուղևորվիլ։ Անկից «նավակ» մը կը նստի Վենետիկ անցնելու համար։ Սակայն, երբ Նիսի և Մոնթեկարլոյի կողմերը կը հասնի, լրտեսության կասկած կը ծագի իր մասին, որով կը հարկադրվի հայտնել շահին պատգամավորն ըլլալու իր հանգամանքը, զոր անշուշտ, դիվանագիտական պատճառներով, պիտի նախընտրել մեջտեղ չհանել։ Հաջորդաբար, փոթորիկի բռնվելով, կը թողու «նավակը» և ցամաքի ճամփով Ջենովա կու գա, ուր լավ ընդունելության մը կը հանդիպի։ Դարձյալ նավով՝ կը շարունակե մինչև Լիվոռնո, ուր կրկին լրտեսության կասկածի ենթարկվելով՝ քաղաքին կառավարչին կողմն Ֆիրենցե կը ղրկվի։ Հոս զինք կը հարցաքննե քարտուղար Վինտա, որմն կը խնդրե ունկնդրություն մը բռնենալ ավագ դոկտորին հետ։ Դոկտոր կը դժկամակի խնդրանքը ընդունիլ՝ գի-

27 Անդ, էջ 202։

28 Անդ։

29 Անդ, էջ 202—203։

30 Անդ, Doc. XXXVIII, p. 203—206։

31 Անդ, էջ 203։ Անհավանական չէ, որ ճամբու ընթացքին Սաֆարի գլուխն անցած դեպքերը, որոնց մասին պիտի անդադառնանք, իրեն որոշ փորձառություն մը ընձեռած ըլլան։

32 Անդ, էջ 203—204։

զևույժ միայն ժամադրություն մը շնորհել եկեղեցւոյ մը մեջ, պատարագի արարողության ընթացքին: Հոն Սաֆար կը ներկայացնէ իրեն շահին նամակը՝ թեպետեմ, ըստ նախնական ծրագրին, զայն պետք էր ներկայացնել միայն Վենետիկէ վերադարձի համար միայն: Մինչ այդ, լսելով իր ժամանումի մասին, Ֆրանսայի, Սպանիոյ դեսպանները և պապական նվիրակը փափաք կը հայտնեն իրեն հետ հանդիպում մը ունենալու: Բայց Սաֆար կը խուսափի՝ պատերազմակերպ իր բազմադարձ վիճակը: Մերժումին բուն պատճառը, հավանորեն այն էր, որ Սաֆար պետք էր նախ Վենետիկ երթալ և սպա անցնիլ Ֆիրենցե, Հոռմէ և Սպանիա: Այնպէս կերելի, որ Վենետիկի տեսակցություններուն տրամադրական նախապաշտօններուն մը ընծայված էր, որուն համաձայն պետք էին ուղղվիլ հաջորդական բանակցությունները³³:

Նորեսի հասկացողության համաձայն, Վենետիկի մեջ Սաֆարի կատարելիք առարկությունը որոշակի քաղաքական նպատակ մը չէր հետապնդեր, այլ՝ «այդ զահին լավ բարեկամությունը այս Անդորրագոյն հասարակապետության հետ և Նորին Վեհափառ Տերության կողմէ զայն շարունակելու փափաքն ու պատրաստակամությունը»³⁴: Հետևաբար, Նորես կը թելադրեր իրեն «իր բանակցությունները առաջ վարել ոչ թէ Ձերդ Անդորրության հետ, այլ առևտուրին հսկող վերամեծար հինգ իմաստուն տերերուն հետ»³⁵: Սաֆար շրջողներ, սակայն, Նորեսի այս թելադրանքը ու կը պատասխանէ, թէ «ամեն գնով կը փափաքեր նամակը Նորին Անդորրության ներկայացնել, որովհետեւ՝ եթե այլապէս դործեր՝ ինքզինքը մեծապէս սխալած և հանցապարտ պիտի նկատեր և ամենուն կողմէ պարսպվելի, քանի որ իր թաղավորին նամակով այս քաղաքը զրկված ըլլալով՝ մեկնած պիտի ըլլար առանց սպանելու Նորին Անդորրության երեսը, որուն կը փափաքեր ներկայացնել հիշյալ նամակը՝ որպէսզի անոր կողմէ հանձնարարվեր հինգ իմաստուն տերերուն»³⁶:

Կր կարծենք որ Սաֆարի պնդումը՝ ամեն գնով ուղղակի դոժին հետ խոսելու, ունէր չբացահայտված կամ, լավ ևս, միայն անուղղակիորեն ակնարկված շարժառիթ մըն ալ: Արդարեւ, Սաֆար ըսած էր Նորեսին՝ թէ շահին կողմէ Ֆիրենցեի, Հոռմէի և Սպանիոյ արքունիքներուն ուղղված նամակները, որոնց պատգամներն էր ինքը, այդ իշխանները կը հորդորէին թուրքին դեմ շարժելու³⁷: Վենետիկյան իշխանություններուն ուղղված նամակին մեջ շահը չէր ուղած ուղղակիորեն դաշինք վենետիկյան քաղաքականության համար այս շատ պափուկ հարցին, հավանորեն, հիշողություններուն մեջ տակաւիին թարմ մնացած այն հուսախաբության պատճառով՝ զոր պարսիկները կրած էին 1580-ին, երբ Մուհամմադ խոյաբանդ շահին դեսպանը՝ խոյա Մուհամմադ՝ վենետիկեցիներու կողմէ ուղարկված էր միայն ազնիվ խոսքերով և 300 դահեկանի նըվերով մը³⁸: Արքայս կը խորհեր անշուշտ, որ, եթէ մյուս քրիստոնյա տերությունները անգամ մը համոզում գոյացնէին հակաթուրք գիւնակցության մասին, վենետիկեցիներն ալ կը մասնակցէին ատոր: Ասիկա կը թելադրվի նաեւ նամակին մեջ հաճախ կրկնված և Սաֆարի ողջունի խոսքերուն մեջ ալ կիրարկված սա բանաձեւն. «Որպէսզի միշտ ավելի նորոգվելով մեր միջև սերն ու բարի ղգացումները, մեր բարեկամության հիմն ալ նույնքան ավելի ամրանա»: Ասկէ զատ, շահը կը խնդրէր որ Սաֆարի հանձնվէին՝ Ֆեթհի Բեյի Սուրիոյ մեջ ենթարկված առևանդումին ետք Վենետիկ վերադարձված իրենդենները³⁹:

33 Անդ, էջ 205:

34 Անդ, էջ 204:

35 Անդ:

36 Անդ, էջ 205:

37 Անդ, էջ 204:

38 Անդ, էջ 38 հշ.:

39 Անդ, Doc. XXXIX, p. 207:

Վերադառնալով ունկնդրության պահուն, Սաֆար՝ հետ ողջունելու դոժը նմանիմաստ խոսքերով, «կը մոտենա նորին Անդորրության գահին և կը համբուրե անոր քղանցքը», հետով կը հանձնէ՝ իր ձեռքով՝ Հալեպի հյուպատոսին ընծայականը՝ ապա իր հետևորդներեն մեկը կը ներկայացնե «երկար տուփ մը, Պուրսայի լաթով ծածկված և գծավոր թաշկինակի մը մեջ փաթաթված, որուն մեջ կար նամակ մը՝ երկու պահպանակներու մեջ զետեղված, մին՝ սնդուսե, իսկ մյուսը՝ կանաչ թավիշե, երկուքն ալ ուրիշ կերպասով մը պարուրված»։ Նամակը կը կարդացվի և տեղվույն վրա կը թարգմանվի նորեսեն, «լրիվ գոհունակությամբ բովանդակ արգոամեծար կոլլեգիումին»⁴⁰։ Դոժը կը պատասխանե՝ դրվատելով շահին ազնվությունն ու բարեկամությունը։ Ֆեթհի Բեյեն առևանգված իրեղեններուն նկատմամբ՝ դոժը կը հայտնե թե՛ ինք չէ՛ր հիշեր անոնց Վենետիկ վերադարձվիլը, բայց պիտի հրահանգեր ձեռնհաս հեղինակություններուն՝ որ պատշաճը տնօրինվեն⁴¹։ Ասոր վրա Սաֆար հրաժեշտ կառնե՛ր ժողովեն, առանց ուրիշ բան ավելցնելու։

Հաջորդող 30 հունվար թվակիր նամակով՝ «Սերենիսսիման» կը պատասխանե շահին, հայտնելով իր գոհունակությունը ի տես հին բարեկամության վերահաստատման և կը վստահեցնե՝ թե պիտի վերադարձվեին Ֆեթհի Բեյի պատվիրակության պատկանող բոլոր իրեղենները։ Միևնույն ատեն կընծայե՛ր հավաստիքը այն պատրաստակամության՝ «որ միշտ պիտի ըլլա մեր մեջ՝ պահպանելու և աճեցնելու համար մեր պաշտոնին բոլոր միջոցներով, այն անկեղծ բարեկամությունը և լավագույն հարաբերությունը, որ շատ երկար տարիներու ընթացքին տիրած է այդ ամենահզոր գահին ու մեր հասարակապետության միջև»⁴²։ Ուրեմն, ոչ մեկ շոշափելի արդյունք՝ զործնական գետնի վրա։

Նույն տարվան 17 փետրվար թվակիր վավերաթուղթի մը վրա նշված կը սխանե՛նք ցանկը՝ Սաֆարի կողմն շահին անունով ստացված իրեղեններուն և զրամական գումարին (հնչուն 521,12 լիրեթ)։ Վավերաթուղթը կը ստորագրեն, բացի Սաֆարեն և նորեսեն, նաև «ջուղայեցի Իսմայիլ և հայ Կոդիս»⁴³։

Պատգամավորությունը Վենետիկեն կը բաժնվի հուլիսին. իր հետ ունեւնալով հանձնարարական նամակներ՝ ըլլա՝ Հալեպի վենետիկյան հյուպատոսին, ըլլա՝ Կոնստանդնուպոլսո պալլին⁴⁴։

Թեև չկարողացանք գտնել Սաֆարի ուղևորության հետագա հստորվաններուն վերաբերյալ վավերաթուղթեր, բայց կրնանք զայն բավականաչափ մերձավորությամբ մը վերակառուցանել այն զանազան ցուցմունքներեն՝ որ ձեռքի տակ ունինք։ Այսպես, Պիետրո դելլա Վալլե, երբ կը նկարագրե Սաֆարի գլուխեն անցածները՝ Եվրոպայի իր առաքելություն լրանալեն ետք, կրսե թե ան իր հետ ունեւր շահին ուղղված նամակներ՝ Հոռմի պապին, Սպանիո թագավորին, կարդինալ Բոռոմեոսին, Վենետիկի դոժեն, Ֆիրենցեի ավագ դոքսեն, Մոդենայի և Պարմայի դոքսերեն, Լուկկայի հասարակապետութենի և Բոկոտոն Կարմեղականներու ընդհանուր մեծավորեն⁴⁵։ Մյուս կողմն, գիտենք ուրիշ հավաստի աղբյուրն մը՝ թե Սաֆար, 1610-ին, Հոռմե դարձի ճամփուն վրա, Լուկկա կը գտնվե՛ր, ուր հատկապես հետաքրքրված է Ս. Միքայելի տա-

⁴⁰ Անդ, էջ 206։

⁴¹ Անդ։

⁴² Անդ, Doc. XLI, p. 209։

⁴³ Անդ, Doc. XL, p. 208։

⁴⁴ Հմմտ. Ալիշան. Սիսական, էջ 419։

⁴⁵ Pietro della Valle. Op. cit., Lettera 6 da Sphahan de' 14 di agosto 1619, par. XXI, p. 50.

ճարին մեջ պահվող 'Իավիթ Հայկազն սուրբին մասունքներով և այցելած է զանոնք՝ մատուցանելով իր հարգանքը⁴⁶։

Կրնանք, ուրեմն, ենթադրել թե Սաֆար Վենետիկեն Հռոմ անցած ըլլար՝ տեսակցելու համար պապին հետ, և անկե ետք այցելած՝ հաջորդաբար Ֆիրենցի, Լուկկա, Մոդենա, Պարմա, Միլանո, Ջենովա և հուսկ Սպանիա։

Այդ նամակներեն ոմանք անձամբ տեսած է նույնինքն Պիետրո դելլա Վալլեն, որ անոնց պարունակության մասին կըսե շատ ընդհանուր կերպով՝ թե ըրողն ալ կը շնորհավորեին շահը քրիստոնյաներու հանդեպ ցույց տված բարյացակամության և թուրքերուն դեմ հակառակությանը համար⁴⁷։ Ապա, ինչ մը ավելի մանրամասնորեն կանգ կառնե Վենետիկի դոժիս և Տոսկանայի ալիադ դուքսին նամակներուն բովանդակության վրա։ Սակայն ատոնք ալ պատշաճություն ու քաղաքավարական բանաձևերեն անդին չէին անցներ. այն-րան ուր կավելցնե ղեկավար Վալլե՝ թե ոչ մեկուն մեջ պահվելու արժանի կարևոր բան մը գտած էր⁴⁸։

Հիշատակության արժանի մանրամասնություն մըն են գուցե Սաֆարի հետ շահին ղրկված նվերներեն ոմանք՝ որոնց կականարկե մեր հեղինակը. արծաթյա սուփ մը, մեծ արվեստով աշխատված. թերևս, կսե ղեկավար Վալլե, թվաբանական տուփ մը ըլլար, թեև—կավելցնե—թագավորը այս բաներեն չի հասկնար. և մասունք մը սուրբ Կարոլոսի շուրջառնեն⁴⁹։

Կը մնա եզրակացնել որ, գործնական գետնի վրա, Խոջա Սաֆարի առաքելությունը ոչ մեկ արդյունք ձեռք ձգած ըլլա իր գլխավոր նպատակին ներկատմամբ։ Դրական, բայց երկրորդական արդյունք մը նկատելու է Տոսկանայի ալիադ դուքսին կողմն շնորհված աղատությունը՝ իր հրոսակներուն կողմն կալանավորված բանի մը հայերու և մեկ երկու մահմեդականներու⁵⁰։

Կը կարծենք թե Խոջա Սաֆարի առաքելության այս ձախողանքը կը բացատրեն անոր տարօրինակ վախճանը։ Արդարև, ինչպես կը վկայեր ղեկավար Վալլեն 1619-ին, Սաֆար մինչև այդ թվականը, վախճանով շահեն, Պարսկաստան չէր վերադարձած, այլ Հնդկաստան գացած և անկից ալ Մոնղոլիա անցած էր⁵¹։ Մինչ այդ, իրեն հանձնված պաշտոնական նամակները և շահին սահմանված ուրիշ վավերաթուղթեր պարունակող արկղը պորտուգալացիներու ձեռքը կանցնին, որոնք զայն շահին կը ղրկեն⁵²։ Մանավանդ թե շահին մոտ Սպանիո դեսպանը կը խորհի շահագործել Խոջա Սաֆարի դիվանը՝ վարկաբեկելու համար շահին դեսպանը սպանական արքունիքին մոտ՝ դոն Ռոբերտո Շերլին, որ Խոջա Սաֆարի առաքելության ընթացքին՝ բավական տարակարծություններ ունեցեր էր այս վերջինիս հետ։ Սակայն, Սպանիո դեսպանը չի հաջողիր շնորհագուրկ ընել դոն Ռոբերտոն, որով միակ վնասվող անձը, կըսե ղեկավար Վալլե, անկախաբար դեսպանին գիտումներեն, «Խեղճ Խոջա Սաֆարը»

⁴⁶ Ահա սուրբին կենսագրին խոսքերը, ղրի առնված դեպքերեն երեք տարի վերջ, 1613-ին.

«Cum anno MDCX Roma rediret Comes Saffi de Arabia ex Armenia, missus illuc a Rege Persarum, contra Turcas auxilia postulante; et lucam veniens magno cum honore exceptus fuisset; interrogavit ubinam requiesceret Sanctus suus gentilis; ostendendo se pridem de eo scire, quod Lucae sepultus haberetur» (Acta Sanctorum. Iunii 3, t. I. Venetiis, 1741, p. 333).

⁴⁷ Pietro della Valle. Op. cit.

⁴⁸ Անդ։

⁴⁹ Անդ։

⁵⁰ Անդ, էջ 52։

⁵¹ Անդ, էջ 49։

⁵² Անդ։

կրլա⁵³, Արղարև, այդ թուղթերուն միջև կային նաև՝ ճամփու ընթացքին *Խոջա Սաֆարի* կատարած բոլոր ծախսերը շահին հաշվուն, որոնք կրնային գանձվիլ գոնե իր ընտանիքին կողմե. մինչդեռ թուղթերը կանխապես շահին ձեռքը անձնած ունեւում՝ այլևս որևէ ճար չէր մնար զանոնք գործածելու⁵⁴:

Այս կետին կանգ կառնեն *Խոջա Սաֆարի* և իր ձախողած առաքելության մասին մեր տեղեկությունները. առաքելություն մը՝ որ շատ փափուկ և զրծվարին կը հայտնվեր, եթե գոյություն ունեին տարակարծություններ մինչև իսկ *Խոջա Սաֆարի* և շահին մնայուն ներկայացուցիչին միջև, մինչ ձախողանքը, գեթ մասամբ, կախում ունենալու էր ժամանակակից Եվրոպայի քաղաքական աննպաստ դրութենեն՝ օսմանցիներու գեմ զինակցություն մը շրջափառներով: Ամեն պարագայի, այդ առաքելությունը, իր այլևայլ ներփակումներով, պատրաստության և գործադրության իր երկար առաջընթացով և, ինչու չէ, նաև իր եզակի եզրափակումով, կը խորհինք թե հետաքրքրական ու նշանակալից պահ մը կը ներկայացնե՝ Պարսկաստանի տնտեսական ու քաղաքական կյանքին հայեոս մասնակցության և ասոր իբրև հետևանք՝ միջադեպին հարաբերություններու մեջ ներգրավումին պատմական ընդարձակ շրջածիրին մեջ: Ինչպես արդեն ըսինք, դիվանալին նոր պրպտումներ կրնան ավելի լույս ափռել՝ գրեթե հեքիաթային թերաստվերի մը մեջ պարուրված այս անձնավորության և պատմական հարակից դրվագներուն վրա: Իսկ որ ալ ըլլան հնարավոր կամ հավանական անդրագույն եզրահանգումները, կը խորհինք թե *Խոջա Սաֆարի*, ինչպես նաև Առեւելքի և Արեւմուտքի միջև դետեղված ուրիշ անհամար հայ անհատներու խմբավորումներու, առաքելության կամ դերին մեծագույն նշանակությունը և շահագրգռությունը կը կայանա ոչ այնքան յուրաքանչյուրին ուրույն բովանդակության, որքան այն ընդհանրական իրողության մեջ՝ որ անոնք հյուսկենք կը բանին «պատմական» գոյախնդրության մը՝ որ քիչ մը ամեն տեղ հետք թողած է իրեն մեր «իկումեններն» մեջ:

ХОДЖА-САФАР—ПОСОЛ ШАХ-АББАСА В ВЕНЕЦИИ

П. Л. ЗЕКИЯН (Венеция)

(Резюме)

В статье приводятся интересные данные о дипломатической деятельности армянского купца Ходжи-Сафара, который по поручению Шах-Аббаса в 1610 г. прибыл в Венецию для укрепления персидско-венецианских экономических и политических отношений. В этот период правящие круги как Персии, так и Венеции были заинтересованы в создании антитурецкого блока европейских и азиатских государств. Миссия Ходжи-Сафара, однако, не имела значительных результатов.

⁵³ Անդ, էջ 49—50:

⁵⁴ Անդ, էջ 49: